

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ PHILOLOGY

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետ*

artashesmartirosyan@yandex.ru

DOI: 10.54503/1829-4073-2023.1.168-183

«ԱՆՁԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ» ԲԱՌԱԽԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՄԵԿ ՄԻԿՐՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

*Բանալի բառեր*¹ իմաստաբանական վերլուծություն, բառային դաս, բառաիմաստային խումբ, իմաստային կառուցվածք, աստիճանակարգային փոփոխություններ, միջուկային և ծայրամասային իմաստություններ, իմաստային տարբերակում:

Ներածություն

Յուրաքանչյուր լեզվի բառային կազմի իմաստաբանական վերլուծության համար ելակետային է համարվում այն խոսքի մասերի տրոհելը: Վերջիններս՝ իրենց քերականական կարգերով ու ձևերով, ըստ էության, բարձրակարգ վերացարկումներ են տվյալ խոսքի մասը ձևավորող բոլոր միավորների բառային նշանակություններից: Բառապաշարի ընդհանուր դասակարգում կատարելիս լեզվաբանությունը տարբերակում է աշխարհի լեզվական պատկերն արտացոլող բառեր նշանակելու տարբեր դասեր, ինչպես՝ բառեր, որոնք մաքնանշում են (դերանուններ), բառեր, որոնք անվանում են (գոյական, ածական, թվական անուններ, մակբայներ, բայեր), բառեր, որոնք կապում են (շաղկապներ և շաղկապական բառեր), բառեր, որոնք գնահատում են (ծայնարկություններ, վերաբերականներ (եղանակավորող բառեր), ազատ

* Հոդվածը ներկայացվել է 28.03.23, գրախոսվել է 04.04.23, ընդունվել է տպագրության 28.04.23:

«Անձերի անվանումներ» բառախմաստային դաշտի մեկ միկրոհամակարգի...

և կայուն կապակցություններ): Նշված դասերը ներկայացնող յուրաքանչյուր բառային միավոր նյութական լեզվական նշան է, որն արտացոլում է ֆիզիկական և հասկացական աշխարհի իրողությունները և հարաբերությունները նրանց միջև: Յուրաքանչյուր խոսքի մաս ներկայանում է բառերով, որոնք խմբավորված են բազմաճյուղ բառային դասերում՝ գագաթից դեպի հիմք հասկացական աստիճանավորմամբ: Դասն օժտված է սեփական կառուցակարգով, այն է՝ նրանում ընդգրկված բառախմաստային ենթաբազմությունների քանակով ու ծավալով և փոխկապակցվածության բնույթով, սեփական՝ ներխոսքիմասային քերականական ձևավորվածությամբ, սեփական բառակազմական, ինչպես նաև դարձվածքների կազմում հանդես գալու հնարավորություններով, իմաստային կառուցվածքի զարգացման ներունակությամբ և այլն¹:

Քննության առարկան, նպատակը և խնդիրները

«Անառակություն, ցոփաբարոյություն, կնամոլություն, գինեմոլություն» բառախմաստային խումբը² գոյական անուն խոսքի մասի՝ մակրոդասի «Անձերի անվանումներ» բառախմաստային բազմությունում գործառող «*Ըստ բնավորության գծերի և դրանցով բնորոշվող վարքագծի*» ենթաբազմության 22 բառախմաստային խմբերից՝ միկրոհամակարգերից մեկն է³: Եվ քանի որ բառախմաստային խումբը ձևավորվում է՝ ըստ նրանում ընդգրկված բառույթների հասկացական ընդհանրության, ուստի մեզ համար հետաքրքրություն է

¹ Հարկ է նշել, որ բառային դասերի (բառախմաստային դաշտերի) մասին հայ լեզվաբանության մեջ տեսական հիմնարար ուսումնասիրություններ չկան, հետևաբար և՛ հայերենի իմաստաբանական բառարան. այն ունենալու տեսլականը տակավին հեռու է իրականություն դառնալուց (տե՛ս և հմմտ. Պ. Բեդիրյան, Բառերի և արտահայտությունների թեմատիկ բառարան-գանձարան [թեզաուրուս], Ե., 2019, 224 էջ): Իմաստաբանական հիմնարար աշխատություն է «Ռուսերենի իմաստաբանական բառարանը»՝ 6 ստվարածավալ հատորներով, որի Առաջաբանում ռուսերենի «...բառային համակարգի կառուցվածքը ներկայացված է հասկացությունների և տերմինների որոշակի ստորակարգությամբ՝ խոսքի մասեր, բառային դասեր, բառային բազմություններ և ենթաբազմություններ, բառախմաստային շարքեր (հմմտ. Русский семантический словарь. Толковый словарь, систематизированный по классам слов и значений, РАН. Ин-т рус.яз. под общей ред. Н.Ю. Шведовой, М., 2002, т. I, էջ X):

² Մեր քննությունից դուրս են մնացել այս խմբում գործառող **բաքոսի քրմուհի, բորբորիտ, սասիր, սիրատաճու** բառույթները՝ հոդվածի ծավալային հնարավորությունների պատճառով:

³ Հմմտ. Шведова 94, 107–108:

Մարտիրոսյան Ա.

ներկայացնում քննել նրանում ընդգրկված բառային միավորների՝ բառույթների իմաստային կառուցվածքի զարգացումը:

Հայտնի փաստ է, որ լեզվի զարգացման յուրաքանչյուր գոյավիճակում կյանքը՝ հասկացական աշխարհը, թելադրում է *նոր բառեր* ստեղծել նոր իրողությունների համար կամ *հին բառերով* արտահայտել նոր իմաստներ: Վերջին իրողությունը, ի դեպ, լեզվի զարգացման որոշակի ժամանակաշրջաններում ավելի հաճախադեպ է, ուստի բառի ներքին՝ իմաստային կառուցվածքի տեղաշարժերը կքննենք տարաժամանակյա կտրվածքում՝ վերհանելով այն սոցիալ-պատմական նախադրյալները, որոնք տվյալ բառույթի իմաստային կառուցվածքում հարուցել են աստիճանակարգային փոփոխություններ՝ տեղաշարժեր միջուկային և ծայրամասային իմաստույթների միջև: Այս համատեքստում մենք քննության առարկա ենք դարձնելու վերոնշյալ բառահիմաստային ենթաբազմության բառույթների իմաստային կառուցվածքների զարգացման բառարանագրական մշակումները ժամանակագրական կարգով՝ հինհայերենյան շրջանից մինչև մեր օրերը, ի հայտ ենք բերելու բառույթների՝ պատմական այդ հսկա ժամանակահատվածում կրած իմաստափոխությունների ճանաչողական-իմաստաբանական մեխանիզմները, նաև **այլ** բառահիմաստային խմբերի հետ հարաբերվելը:

Քննության վարկածը

Լեզվի զարգացման տարբեր գոյավիճակներում փոփոխվում է ոչ թե բառահիմաստային դաշտ-համակարգը, այլ նրա ներսում առկա որոշ հատվածներ և հարաբերությունները նրանց միջև, որովհետև բառային դասի՝ դաշտի (բառահիմաստային բազմության, ենթաբազմության, խմբի) ցանկացած անդամ բազում իմաստային թելերով՝ հարաբերություններով կապված է ողջ համակարգում գործառող մյուս անդամների հետ: Արդյունքում վերջինիս ամեն մի փոփոխություն հանգեցնում է լեզվի բառային կազմի որակական տեղաշարժի:

Այսպես.

ԱՆԱՄԿ

□ Հին հայերենում ածականի արժեքով իրացրել է «անամոթ, անպատկառ, վատնող, զեխ և շռայլ» միջուկային (հմմտ. «ա. Անամոթ, անպատկառ,

«Անձերի անվանումներ» բառախմաստային դաշտի մեկ միկրոհամակարգի...

անարգել, վատնիչ ընչից, զեղխ և շուայլ») և «անօրեն, անկարգ, խառնակ» ծայրամասային իմաստոյթները⁴:

□ Հետագայում միջուկային «անամոթ» ընդհանրական իմաստոյթը վերադարձվել է՝ առնչվելով անձի բարոյական արժեհամակարգին ու նկարագրին, իսկ «անօրեն, խառնակ» իմաստոյթները հնացել են՝ չեզոքացվել (հմմտ. «ա. 1. Անբարոյական, շուայտ, զեղխ: *Անառակ կին*, անբարոյական կին, բող: 2. Անկարգ, վատ, անբարոյական: *Անառակ կեանք վարել*: 3. Խառնակ, անօրեն: Անառակ-որդի, Չար, անհանդարտ (երեխաներին տրվող մակդիր)»⁵:

□ Նոր շրջանի⁶ վկայություններում հինհայերենյան միջուկային իմաստոյթի հոմանիշային ծայրանդամները մի դեպքում մղվել են առաջ, իսկ ծայրամասայինները ստացել են փոխաբերական կիրառություն (հմմտ. «ա. 1. Ջելխ, ցոփ, շվայտ, անբարոյական: 2. փխբ. Անկարգ, անամոթ, չար (անձ): դրձվ. **Անառակ որդի** – ծնողներին չհնազանդվող, հայրենական տունը լքող զավակ») ⁷, մյուս դեպքում բառոյթը դրսևորել է խոսքիմասային տարարժեքություն՝ պահպանելով նախորդ վկայությունների⁸ միջուկային իմաստոյթները, հավելվելով նոր ծայրամասային իմաստոյթ՝ *հնացած* նշումով (հմմտ. «ա., գ. 1. Անբարոյական: 2. Շվայտ, զեղխ: 3. Մոլությունների անձնատուր եղած, խառնագնաց»⁹:

□ Պատմականորեն բառոյթի հոմանիշային շարքում, որպես կանոն, ևս ընթացել են «զարգացումներ»՝ *իմաստային տարբերակումներ*՝ ուղեկցված շարքի անդամների աստիճանակարգային փոփոխություններով (հմմտ. **հին հայերեն**՝ «ա. 1. Անամոթ, անպատկառ: 2. Ջեղխ, շուայտ: 3. Անկարգ, խառնակ»¹⁰, **արևելահայ աշխարհաբար**՝ հմմտ. «տե՛ս 1. Անբարոյական, Պոռնիկ: 2. Շվայտ (1)»¹¹: Ըստ այդմ, բառոյթը պահպանել է իր հասկացական դաշտի

⁴ Աւետիքեան, Սիրմելեան, Աւգերեան 1836, 110:

⁵ Մալխասեանց 1944, 90:

⁶ Նկատի ունենք XX դարի վերջին քառորդը, որից հետո արդի հայերենը ցայսօր չունի ակադեմիական լիակատար բացատրական բառարան, որով կարելի լինի դիտարկել բառիմաստի զարգացման ընթացքը:

⁷ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 75:

⁸ Հմմտ. Մալխասեանց 1944, 90:

⁹ Աղայան 1976, 46:

¹⁰ Ղազարեան 2006, 29: Միջինհայերենյան վկայություններ չկան, քանի որ միջին հայերենի միակ բառարանում վկայված չեն այն բառային միավորները, որոնք գործառնել են գրաբարի բառային կազմում (տե՛ս և հմմտ. Ղազարյան, Ավետիսյան 2009):

¹¹ Սուքիասյան 2009, 35:

Մարտիրոսյան Ա.

բացասական երանգավորումը. *անամօթն* ու *անպարկառը* դուրս են մղվել շարքից, իսկ *խառնակ* ծայրանդամի «պիղծ, անմաքուր» իմաստությամբ¹² նոր շրջանի արժեհամակարգում ճշգրտվել է և շարքում առաջ մղվել՝ մի դեպքում համարժեք *անբարոյականին*, *պոռնիկին*, մյուս դեպքում՝ *ցուփին*, *զեխին* ու *շվայտին*՝ վերջինիս բացասական երանգավորմամբ, որն ի դեպ ժողովրդախոսակցականում *ուպոող-խմողն* է՝ «կերովխումի անձնատուր եղածը»:

□ Արևմտահայերենի XX դարի առաջին կեսի բառարանագրական վկայություններում հինհայերենյան «անկարգ» ծայրամասային իմաստությամբ վերածվել է միջուկայինի՝ նոր, հեզնական երանգավորմամբ ծայրամասային իմաստությունների հավելմամբ (հմմտ. «ա. անկարգ, ստահակ. զեղխ, ցուփ, շուայտ. **բարիպտուղ, բարիծաղիկ**»¹³, որոնք վկայվել են նաև դարձվածքի արժեքով (հմմտ. «Բարի պտուղ (հեզն.) Չար, անարժան, անպէտք»¹⁴, ավելի ուշ շրջանում կայունացել են ածականի արժեքով «շփացած, չար, չարաճճի» միջուկային իմաստությունները¹⁵:

ԳԻՆԵՄՈԼ

□ Հին հայերենում իրացրել է ածական-գոյականի արժեքով «հարբեցող» միջուկային (հմմտ. «ա. Մոլեալ ի գինի. և գինուվ արբեցող. արբեալ [*Բազմութիւն արանց գինեմոլաց*]¹⁶» և «գինեսեր» ծայրամասային իմաստությունները (հմմտ. «ա. գինիի մոլի՝ խենդ, գինեսեր, հարբեցող»)¹⁷: Այս շրջանում «հարբեցող» ընդհանրական իմաստություն իրացվել է նաև **արբշիռ** ածական-գոյականի տարարժեք ձևում՝ մի շարք ծայրամասային իմաստություններով (հմմտ. «Արբեցող. արբեալ. մոլեալ զհետ ուտելեաց և ըմպելեաց. հանգանակող. և անառակ. շոայլ, զեղխ»)¹⁸:

¹² Հմմտ. **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 926:

¹³ **Գայայեան** 1938, 16:

¹⁴ **Մալխասեանց** 1944, 344, հմմտ. նաև՝ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 296, **Աղայան** 1976, 176:

¹⁵ Հմմտ. **Սարգսյան** 1991, 18, **Սաքապետոյեան** 2011, 23:

¹⁶ **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 553, նաև՝ **Ջախջախեան** 1837, 359:

¹⁷ **Աւգերեան, Ճէլալեան** 1865, 215:

¹⁸ **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 342, տե՛ս և հմմտ. նաև՝ **Ջախջախեան** 1837, 226, **Աւգերեան, Ճէլալեան** 1865, 131: Հայկազյանում վկայված սույն բառահոդվածի գրաբարյան *անառակ* իմաստությամբ հետագա վկայություններում չեզոքացվել է, *հանգանակող*-ը փոխարինվել *զեխ* ու *շվայտ* հոմանիշներով: Աշխարհաբարի խորհրդային շրջանի վերջին վկայություններում նշված իմաստությունները պահպանվել են (հմմտ. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 210, **Աղայան** 1976,

«Անձերի անվանումներ» բառախմաստային դաշտի մեկ միկրոհամակարգի...

□ Միջինհայերենյան շրջանում «հարբեցող» իմաստույթն իրացվել է **գի-նէճան** ձևով¹⁹:

□ Աշխարհաբարի նախախորհրդային շրջանի արևմտահայ վկայություններում բառույթի իմաստային կառուցվածքում պահպանվում է «ոգելից խմիչքի նկատմամբ մոլություն ունենալու» հինհայերենյան միջուկային գերիմաստույթը²⁰, վկայվում է նաև «խման» միջուկային իմաստույթով²¹:

□ Բառույթի հոմանիշային շարքում հինհայերենյան *գինեսէր* հոմանիշին հետագայում հավելվում են բառապաշարի տարբեր շերտերին պատկանող բառույթներ, ինչպես՝ «*գինախում, գինեպաշտ, գինարբու, գինեճան, հարբեցող, արբշիռ* (բնատ.), (ժող.)՝ *խմող, գինագիժ, (հզվդ.)՝ մոլարբու, բաժակարբու, գինու տոպրակ, գինիի սպունգ* (արևմտհ.), *ալկոհոլամոլ, Բաքոսի երկրպագու*»²²: Տակավին հինհայերենյան շրջանից ձևավորվել է նաև հականիշ *գինապեսաց* եզրը, որը վկայաբերվում է նաև խորհրդային շրջանի վերջին բառարանում²³:

ԿՆԱՄՈԼ (-ի)

□ Հին հայերենում ածականի արժեքով իրացրել է «մոլի իգասերի» միջուկային իմաստույթ (հմմտ. «ա[ծ]. Մոլեալն ' ի սէր կանանց. իգասէր») ²⁴:

□ Միջինհայերենյան շրջանում իրացվել է **կնասիրություն** բաղադրությունը (հմմտ. «ն. Կնասեր լինելը, կնամոլություն: *Ջի նախ եգիտ սատանայ իւր զէն զորկրամոլութիւն, ապա զկնասիրութիւն, ապա զսպանութիւն* (ՎՊՏ, 12)»²⁵: **Կնասէր-ի** միջուկային բացասական երանգավորումը հետագայում փոխարինվել է դրականի (հմմտ. «ած. 1. Իւր կնոջը սիրող, ամուսնասէր: *Կնասէր*

126): Հարկ է նշել, որ «հարբեցող» միջուկային իմաստույթն այսօր չեզոքացել է, իսկ փոխաբերականը՝ կայունացել, վերածվել միջուկայինի:

¹⁹ Հմմտ. **Ղազարյան, Ավետիսյան** 2009, 141:

²⁰ Հմմտ. **Գաբամաճեան** 1910, 193, **Ճիզմեճեան** 1954, 59, **Ճէրէճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան** 1992, 392:

²¹ Հմմտ. **Ճէրէճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան** 1968, 91:

²² Հմմտ. **Սուքիասյան** 2009, 143, 196: Հավելենք, որ Մալխասյանցի մոտ վկայաբերված է գինեմոլության մղող **գինեղև** բարբառային ձևը («գ. Ըստ սնահաւատութեան՝ դև, որ մարդուն դարձնում է գինեմոլ, դրդում է դէպի հարբեցութիւն [*Նա գինեղև ուներ*]», հմմտ. **Մալխասեանց** 1944, 436):

²³ Հմմտ. **Աւգերեան, Ճէլալեան** 1865, 214, տե՛ս և հմմտ. նաև **Մալխասեանց** 1944, 436, **Աղայան** 1976, 237:

²⁴ **Աւետիքեան, Սիրմելեան, Աւգերեան** 1836, 1104:

²⁵ **Ղազարյան, Ավետիսյան** 2009, 377/ՎՊՏ՝ Վարդանայ Բարձրբերդցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861:

ամուսին», հմմտ. նաև՝ «ած. Իր կնոջը սիրող: 2. Կանանց հետևից ընկնող, կնամոլ, ցանկասեր»²⁶:

□ Նոր շրջանի վկայություններում **կնամոլ**-ը հանդես է գալիս որպես գոյական՝ մեկ միջուկային իմաստով, բացասական երանգավորմամբ (հմմտ. «գ. Կանանց հետևից ընկնող, առանց լուրջ մտադրության՝ միայն մարմնական հաճույքի համար կանանց հետ կապվող, ցանկասեր, իգամոլ»), վկայվում է նաև **կնամոլական** ածականական ձևը²⁷:

□ Բառույթի հոմանիշային շարքի աստիճանավորումը հինհայերենյան շրջանից (հմմտ. «ա. Իգամոլ (ի), իգասեր, կնասեր»)²⁸ գրեթե չի փոխվել. հավելվել են գոյական-ածականի արժեքով բառապաշարի տարբեր ոճական շերտերին պատկանող բառույթներ (հմմտ. «Իգամոլ, ցանկամոլ, կնասեր, կնապաշտ, իգասեր, ցանկասեր, կնորս, կինորս, բոգարած (ժող.), (գրք.) դոն ժուան, լովելաս»²⁹, (հզվդ.) կնամոլի, կնախնդիր, կնաշրջիկ, իգամոլի, իգախազ, շոռաչք (գվդ.)....»)³⁰:

ՀԱՅՐԱՏ

□ Հին հայերենում վկայվել է ածականի արժեքով «անառակ» միջուկային իմաստով, նաև՝ **այրատ**, **արատ** ձևով՝ ծավալուն ծայրամասային իմաստայիններով (հմմտ. «**ՀԱՅՐԱՏ** կամ **ՅԱՐԱՏ**, Անառակ, համարձակ, լիրբ, անամօթ, անպատկառ, պազշոտ, խենեշ, անժուժկալ, անկարգ (անձն կամ աչք և այլն), [*Ձհայր և զայր յամօթ առնէ յայրաւոն (կին)*])», նաև՝ մակբայի արժեքով (հմմտ. «Անառակաբար, լրբաբար, անպատկառաբար, պազշոտութեամբ [*Որ ոչ հայիցի յայրաւոն (յն. Յայրաւ աչօք) ի կին ընկերին, յայր է թէ ոչ պոռնկի*])»³¹:

□ XX դարի արևմտահայ վկայություններում բառույթը վկայվել է մակբայ-ածականի տարարժեքությամբ, հինհայերենյան միջուկային ածականական իմաստի (հմմտ. «անառակ») փոփոխմամբ՝ հատկանիշի «մեղմացմամբ»

²⁶ Մալխասեանց 1944, 741, նաև՝ Աղայան 1976, 742:

²⁷ Աղայան 1976, 741:

²⁸ Ղազարեան 2006, 386:

²⁹ Ռուսերենից փոխառյալ ձևերի հոմանիշային այս շարքին հարկ է հավելել **սելադոն** հնացած ձևը, որը հեզնաբար «կաշուն, որպես կանոն, ծեր սիրատաժուն, կանանց հետևից քարշ եկողն» է, որն ի դեպ վկայվել է միայն թարգմանական բառարաններում (հմմտ. Ղարիբյան 1977, 1086):

³⁰ Սուքիասյան 2009, 531:

³¹ Աւետիքեան, Սիրմեղեան, Աւգերեան 1836, 322:

«Անձերի անվանումներ» բառախմաստային դաշտի մեկ միկրոհամակարգի...

(հմմտ. «մ. անամօթ նայուածքով, պագշոտ, անառակ, լիրբ, անկարգ»)՝³², ավելի ուշ վկայություններում բառույթը վկայվել է *հնացած* նշումով³³:

ՀԱՐՃ

□ Հին հայերենում իրացրել է գոյականի արժեքով «երկրորդական կին» իմաստույթը՝ վրացերենի *խարճա* ձևի համաբանությամբ (հմմտ. «գ. երկրորդական կին՝ առ երբայեցիս, կամ՝ առ հեթանոսս [*Բազումք ի նոցանէ ի հարճից էին ծնեալ*]»)³⁴:

□ Հետագա վկայություններում բառույթի գերիմաստույթը չի փոփոխվել. կախված պատմական տարբեր շրջափուլերում հանրային կյանքում գերիշխող գաղափարաբանությունից՝ միջուկային իմաստույթը վերաձևակերպվել է, հավելվել են նոր ծայրամասային իմաստույթներ (հմմտ. «գ. երկրորդական կին, աղախին (կանանոցի)», հմմտ. նաև՝ «գ. Օրինաւոր կնոջ հետ միաժամանակ պահվող երկրորդական կին, որից ծնված զաւակը զուրկ էր օրինական զաւակի իրաւունքներից», «գ. 1. (պատմ.) Օրինական կնոջ հետ պահվող կին-սիրուհի: 2. Տարփուհի, սիրուհի»)³⁵:

□ Արևմտահայ վկայություններում բառույթը պահպանել է իր հինհայերենյան միջուկային իմաստույթը՝ երբեմն ծայրամասայինների տարբեր ձևակերպումներով (հմմտ. «3. վիճակ կնոջ մարդու քով ապրող առանց ամուսնության»)³⁶:

□ Բառույթի հոմանիշային բառաշարքը վերստին փաստում է բառույթի հինհայերենյան իմաստային կառուցվածքի «կայունությունը» (հմմտ. «գ. 1. Սիրուհի, սիրելյան (խսցկ.), տարփուհի, տարփածու, հոմանի, հոմանուհի, ցնծուհի, սիրող, (հնց.) սեղեխ, տղոն, (բրբ.) խասա, խասաքի: 2. Տե՛ս Աղախին»)³⁷:

³² Գաբամաճեան 1910, 967, Ճիզմենճեան 1954, 1061:

³³ Հմմտ. Մալխասեանց 1944, 388, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 286, Աղայան 1976, 813:

³⁴ Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան 1836, 65–66, նաև՝ Ջախջախեան 1837, 857, Աւգերեան, Ճէլալեան 1865, 482:

³⁵ Գայայեան 1938, 280, նաև՝ Մալխասեանց 1944, 71, Աղայան 1976, 846:

³⁶ Ճիզմենճեան 1954, 820, նաև՝ Գաբամաճեան 1910, 795, Ճէրէճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան 1968, 425, Սաքապետոյեան 2011, 181:

³⁷ Սուքիասյան 1967, 379: Շուրջ կես դար հետո հոմանիշների լիակատար բառարանի երկրորդ հրատարակության մեջ ճշգրտվել է շարքի անդամների՝ այս կամ այն ոճական շերտին պատկանելը (հմմտ. «գ. 1. (բնստ.) Սիրուհի, տարփուհի, տարփածու, հոմանի, հոմանուհի, ցնծուհի, սիրելյան (ժող.), (հնց.) սեղեխ, տղոն, խասա, բոզ (ժող.) (ոչ օրինական կին): 2. Տե՛ս «Աղախին» (հմմտ. Սուքիասյան 2009, 612): Այս շարքում կարող է ընդգրկվել նաև **հետերա** փոխառյալ ձևը [*retera* < հուն. *heteria*, բառացի՝ ընկերուհի, սիրուհի]

ՊՈՌՆԻԿ³⁸

□ Հինհայերենյան շրջանից դրսևորել է ածական-գոյականի տարարժեքություն՝ «անբարոյական» ընդհանրական իմաստությամբ, առնչվելով օրինական ամուսնություն չունեցող թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, իսկ ծայրամասային իմաստությամբ՝ նաև ամուսնացյալ կանանց (հմմտ. «ա. գ. Որ խառնակի ընդ այլում, ընդ որում չէ ամուսնացեալ օրինօք՝ եթէ այր իցե և եթէ կին. Եւ մանաւանդ՝ որպէս Բոգ, կամ՝ որպէս կին արամբի շնացեալ»)՝³⁹:

□ Միջինհայերենյան շրջանում *պոռնիկ* սերող հիմքով իրացվել է **պոռնկահայեաց** բաղադրությունը՝ ածականի արժեքով (հմմտ. «ա. Պոռնիկի պես նայող, անառակի նայվածք ունեցող: [Եւ վայրավարներեալ պոռնկահայեաց աչօքն կաթեցուցանէր արքայսր] (ԳՏ, 353)»)⁴⁰:

□ Հետագա վկայություններում պահպանելով խոսքիմասային տարարժեքությունը՝ մեկնվել է որպես գավառաբանություն՝ «անբարոյական» ընդհանրական իմաստությամբ չեզոքացնելով տղամարդուն առնչվելը. վերջինս պահպանվել է միայն բարբառներում (հմմտ. «ած. գ. Ինքն իրան վաճառող կին, բոգ: 2. Ամուսնացած կին, որ շնանում է ուրիշ տղամարդու հետ: 3. մոծ. Անառակ տղամարդ, շնացող: 4. գվդբ. Տղամարդ, որ երեք անգամ ամուսնանում է կոյս աղջիկների հետ»)՝⁴¹: Իրացվել է նաև կայուն կապակցություններում, ինչպես՝ *պոռնիկ գրիչ*՝ «Վաճառված գրիչ, մարդ, որ փողի կ[ա]մ շահի համար պատրաստ է ամեն ինչ գրել, ստել, զրպարտել, շողոքորթել ևն», *քա-*

(հմմտ. «գ. 1. Հին Հունաստանում՝ ազատ կյանք վարող կրթված ամուրի կին: 2. փխբ. Թեթևաբարո կին, տարփուհի» (հմմտ. **Աղայան** 1976, 864), հմմտ. նաև՝ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 344, «տե՛ս Տարփուհի, Պոռնկուհի» (հմմտ. **Սուքիասյան** 2009, 627), **Հայրապետյան** 2011, 325): Ի դեպ, փոխաբերական կիրառությունը օտար բառարաններում վկայվում է որպես հնացած (հմմտ. **Кузнецов С.А.**, Большой толковый словарь русского языка, «Норинт», С.-Петербург, 1998):

³⁸ Ըստ Հր. Աճառյանի՝ փոխառություն է հունարենից՝ «ապօրի խառնակուղ այր կամ կին» իմաստով, որոնց համար հունարենն ունեցել է տարբերակված բառակազմական դրսևորումներ: Իգական բառաձևում «արտահանելով վաճառել» հիմքակազմիչ բայն է. «...նախնաբար պոռնիկները գերուհի էին լինում, այն է վաճառքի առարկայ...Հայերենի -իկ վերջաւորութիւնը ցոյց է տալիս թէ բառը նախ անցել է Պարթևներին և այնտեղից էլ հասել մեզ» (տե՛ս **Աճառեան** 1971, 99, հմմտ. նաև՝ **Ջահուկյան** 2010, 642):

³⁹ **Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան** 1836, 659:

⁴⁰ **Ղազարյան, Ավետիսյան** 2009, 659/ԳՏ՝ Գիրգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1972:

⁴¹ **Մախասեանց** 1944, 115: Ըստ Հր. Աճառյանի՝ այս իմաստով գործածական է եղել Բաբերդի բարբառում (տե՛ս **Աճառեան** 1913, 922):

«Անձերի անվանումներ» բառախմաստային դաշտի մեկ միկրոհամակարգի...

դաքական պոռնիկ՝ «Նա, որ քաղաքական հարցերում սկզբունք չունի և միջոցների մէջ խտրություն չի դնում»⁴²:

□ Նոր շրջանի վկայություններում խոսքիմասային տարաբեկության մեջ առաջնային է դառնում գոյականականը, երբ բառույթի ընդհանրական միջուկային իմաստույթը ներկայանում է արդեն հանրության անդամի շեշտադրմամբ, ծայրամասային իմաստույթներում չեզոքանում է ամուսնացած լինելու հանգամանքը՝ հասցեագրված առավելապես կանանց, կայունանում է «ծախու» իմաստույթի փոխաբերական կիրառությունը (հմմտ. «գ. ած. 1. Հասարակաց կին: 2. Առհասարակ՝ շնություն անող մարդ (առավել. կին), շնացող: 3. փխբ. Ծախու՝ ծայրահեղորեն անսկզբունք մարդ»)՝⁴³ Վերջին՝ անկախության շրջանում խոսակցական բառաշերտում կայունացել է նաև ռուսերենից պատճենյալ *գիշերային թիթեռնիկ* (հմմտ. ночная бабочка) կապակցությունը, որն առնչվում է առավելապես գիշերային ժամերին դրսում պոռնկությամբ զբաղվող կանանց:

□ Բառույթի հոմանիշային շարքի տարաժամանակյա վերլուծությունը ի հայտ բերեց մի ուշագրավ փաստ. հինհայերենյան շրջանից սկսած՝ բառույթի *իմաստային տարբերակումները* հոմանիշային շարքում 1 անդամից⁴⁴ ծավալվել-հասել են 72-ի⁴⁵: Ի դեպ, այդ տարբերակներից գրեթե մեկ տասնյակը վկայված եղել են Հայկազյանում (հմմտ. անառակ, լիրբ, անզգամ և այլն), սակայն իմաստույթների այլ աստիճանավորմամբ: Այս սովոր հոմանիշային շարքում անդամների մի զգալի մասը *հնացած* են (հմմտ. *խենեշ, հայրապ, ճակաճան, խառնակ* և այլն), *ժողովրդախոսակցական* ձևեր (հմմտ. *ծախված, ծախու*), գավառաբանություններ (հմմտ. *հրապարակ, փոստալ, քյոփկ, թեթև վարքի տեր, ի նոցանե, առու թռչողի, դուրս ընկած*⁴⁶, *աչքը դուրս, ծամը կտրած, փեշից կորած*):

ՎԱՐՁԱԿ

□ Հինհայերենյան շրջանում հանդես է եկել «երգող, պարող կին և կատակերգակ տղամարդ» գոյականի միջուկային (հմմտ. «գ. Կին երգեցիկ՝ երա-

⁴² Մալխասեանց 1944, 115:

⁴³ Աղայան 1976, 1225:

⁴⁴ Հմմտ. Ղազարեան 2006, 593:

⁴⁵ Հմմտ. Սուքիասյան 2009, 944:

⁴⁶ Հմմտ. նաև *հանեալ*՝ «ած. դուրս ըրած (կնիկ)» (Ազերեան, Ճէլալեան 1865, 474), նաև՝ *հանեալ կին* *հնացած* կայուն կապակցությամբ՝ «արձակված կին» իմաստույթով, «գործից՝ պաշտոնից հանված»-ի համաբանությամբ (հմմտ. Մալխասեանց 1944, 49):

Մարտիրոսյան Ա.

Ժիշտ. և կաքաւիչ ի խնջոյս և ի թատրոնս (իբր վարձեալ, կամ վարժեալ, վարուք արձակ.) և կատակերգակ (այր). [*Կամ թէ լսիցեմ տակաւին զձայն գուսանաց և վարձակաց*])» և «պոռնիկ» ծայրամասային իմաստոյթներով (հմմտ. «Վարձակ ոք (յն. պոռնիկ կամ բոզ) ի բաց հանիցէ յանձնէ զոսկին: Գուսան և հացակատակ. վարձակ. բոզ՝ և երգեցիկ. (յն. մի բառ և եթ, միմոս՝ որ է հասարակօրէն արական)....»)⁴⁷: Ուշագրավ է, որ Հայկազյանից երեք տասնամյակ հետո տպագրված Առձեռն-ում բառույթը կորցրել է իր բացասական երանգավորումը՝ իրացնելով «երգող-պարող կին» միջուկային իմաստույթը (հմմտ. «գ. երգող՝ խաղող կնիկ (վարձած, կամ վարժած)»⁴⁸, չեզոքացել են բառույթի «կատակերգակ այր», «գուսան և հացակատակ», «պոռնիկ և բոզ» ծայրամասային իմաստոյթները:

□ Հետագա՝ խորհրդային շրջանի արևմտահայ վկայություններում բառույթը պահպանել է Առձեռն-ում վկայված իր դրական երանգավորումը (հմմտ. «գ. վարձուած երգչուհի, գուսան. պարուհի»⁴⁹՝ միջուկայինի պահպանմամբ (հմմտ. *վարձուած երգչուհի*), ծայրամասայինների դրական (հմմտ. «գ. 1. վարձուած երգչուհի, 2. պարուհի, 3. վարձող»)՝⁵⁰ կամ բացասական երանգավորմամբ (հմմտ. «գ. 1. վարձուած երգչուհի, 2. պարուհի, 3. պոռնիկ»)՝⁵¹, նաև՝ միջուկայինի փոփոխությամբ (հմմտ. «գ. 1. հարձ, սիրուհի, 2. վարձուած երգչուհի՝ գուսան՝ պարուհի. 3. պոռնիկ»)՝⁵²:

□ Խորհրդային շրջանի արևելահայ ավելի վաղ վկայություններում հինհայերենյան ծայրամասային իմաստոյթներին հավելվել է «անբարոյականության» ընդհանրական իմաստույթ (հմմտ. «2. Թեթև վարքի տէր՝ անպարկեշտ կին»)՝⁵³, ավելի ուշ՝ *հնացած* նշումով⁵⁴, իսկ վերջին վկայությունում նախորդ միջուկային իմաստույթը (հմմտ. «խնջույքներում երգող-պարող կին»)

⁴⁷ Աւետիքեան, Սիւրմելեան, Աւգերեան 1836, 795–796:

⁴⁸ Աւգերեան, Ճէլալեան 1865, 753, տե՛ս և հմմտ. նաև՝ Գաբամաճեան 1910, 1243, Զահուկյան 2010, 707: Ըստ Հր. Աճառյանի՝ ծագում է պահլավերենի varzak > պարսկերենի barza ձևից (հմմտ. Աճառեան 1926, 322):

⁴⁹ Գայայեան 1938, 470:

⁵⁰ Ծիզմեճեան 1954, 1319:

⁵¹ Զէրէճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան 1968, 799:

⁵² Զէրէճեան, Տօնիկեան, Տէր Խաչատուրեան 1992, 883:

⁵³ Մալխասեանց 1944, 313:

⁵⁴ Հմմտ. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 380:

«Անձերի անվանումներ» բառախմաստային դաշտի մեկ միկրոհամակարգի...

հավելվել է ծայրամասայիններին, և իմաստային կառուցվածքում հայտնվել է նոր միջուկային իմաստույթ (հմմտ. «գ. 1. Հարձ»)՝ *պատմաբառ* նշումով⁵⁵:

□ Բառույթի հոմանիշային շարքը հինհայերենյան շրջանից ևս ենթարկվել է իմաստային-աստիճանակարգային տարբերակումների (հմմտ. **գրաբար**՝ «գ. 1. Վարձական: 2. Վարձկան, պոռնիկ, բոգ: 3. Միմոս, խեղկատակ»⁵⁶, **աշխարհաբար**՝ «գ. 1. Պարուհի (հնց.) վարձական, վարձկան (զվարճավայրերում ևն պարող կին): 2. Տե՛ս Հարձ: 3. Տե՛ս Պոռնիկ»⁵⁷). չեզոքացվել է բառույթի սեռային պատկանելությունը, հնացած է դիտվել շարքի *վարձական* («գուսան, կատակերգու, միմոս») իմաստույթը՝ «վարձու» գերիմաստույթով իմաստային-կիրառական եզր ձևավորելով *հարձ* և *պոռնիկ* բառույթների հետ:

Եզրակացություններ

Այսպիսով, «*Անառակություն, ցուրտբարոյություն, կնամոլություն, գինեմոլություն*» բառախմաստային խմբի բառույթների իմաստային-տարածամանակյա վերլուծությունն ի հայտ բերեց զարգացման հետևյալ միտումներն ու ուղղությունները.

1. Քննվող բառույթների իմաստային կառուցվածքի զարգացման «ակտիվությունը» մեծապես կանխորոշված է եղել պատմական որոշակի ժամանակաշրջանում հանրության շրջանում գործառուղ բարոյականության արժեհամակարգի ընկալմամբ: Բառախմաստային խմբի բառույթների քանակական կազմը հինհայերենյան շրջանից հիմնականում պահպանվել է՝ պատմական տարբեր փուլերում «կուտակելով» նոր բառախմաստային տարբերակներ, որակական փոփոխություններ: Չնայած իմաստային կառուցվածքի աստիճանակարգային փոփոխություններին՝ հինհայերենյան շրջանից բառույթները պահպանել են *ցուրտբարոյություն* գերիմաստույթը (архисема):

2. Բառախմաստային խմբի գրեթե բոլոր բառույթների իմաստային կառուցվածքը կրել է էական փոփոխություններ հինհայերենյան շրջանից՝ բառի նույնականության տեսակետից. փոխվել է բառի *նշանակողական-իմաստադրարբերակիչ բաղադրիչը* մի դեպքում *շեղման* (девиация) միջոցով, երբ գերիմաստույթը պահպանվում է, իսկ միջուկային և ծայրամասային իմաստույթները՝ ձևափոխվում (հմմտ. *անառակ, կնամոլ, հարձ, վարձակ, պոռնիկ*), մյուս

⁵⁵ Աղայան 1976, 1367:

⁵⁶ Ղազարեան 2006, 632:

⁵⁷ Սուքիասյան 2009, 1051:

Մարտիրոսյան Ա.

դեպքում *փոխաբերության* (հաճախ՝ փոխանվանական) տիպով, երբ գերիմաստույթի պահպանմամբ պատմական զարգացման ընթացքում նախնական փոխաբերական նշանակությունն ամրապնդվում է որպես հիմնական (հմմտ. *անառակ, պոռնիկ*):

3. Դիտվել է բառույթների հոմանիշային շարքի ընդլայնում (հմմտ. *պոռնիկ, կնամո*), հականիշ եզրերի առաջացում (հմմտ. *գինեմոլ-գինալեսաց, կնամոլ-կնասեր-կնամեծար*), ինչպես նաև բառափմաստային տարբերակների աճ՝ ոճական նշույթավորվածությամբ կայուն կապակցություններում (հմմտ. *պոռնիկ գրիչ, քաղաքական պոռնիկ, Բաքուի երկրպագու*):

4. Դիտվել է փոխառյալ բառերի ներխուժում ենթաբազմության տիրույթ (հմմտ. *դոն ժուան, լովելաս, սելադոն, հեպերա*):

5. Քննվող ենթաբազմության կազմում կան բառույթներ, որոնց իմաստային կառուցվածքը հինհայերենյան շրջանից ցայսօր մնացել է անփոփոխ (հմմտ. *գինեմոլ, կնամո*): Որպես կանոն, նման բառույթների բոլոր իմաստույթները լինում են միջուկային, ծայրամասային և պոտենցիալ իմաստույթներ չկան: Վերջին իրողությունը պայմանավորված է մարդու ճանաչողական գործունեությամբ, երբ պատմական որոշակի փուլում լեզվակիրների մտածական տիրույթում արդիականությունը կորցնում են որոշ մասնավոր երևույթներ և հասկացություններ՝ վերածվելով հնաբանությունների և պատմաբանների (հմմտ. *հայրապ, վարձակ, հարձ*):

6. Հայերենի զարգացման տարբեր գոյավիճակներում որոշ բառույթների իմաստային կառուցվածքում նկատվել են *աստիճանավորման* զգալի տեղաշարժեր. նրանց միջուկային և ծայրամասային իմաստույթները տվել են իրենց ածանցյալները «Անձերի անվանումներ» բառափմաստային դաշտի **այլ** բառափմաստային ենթաբազմություններում և խմբերում՝ նաև փոխաբերական իմաստի կայունացմամբ գործառնելով բառապաշարի տարբեր շերտերում և ոճերում, ինչպես՝ «*Ըստ սոցիալական ապահովվածության, ըստ գոյաբանման միջոցների ձեռք բերման եղանակի*» (հմմտ. ՊՈՌՆԻԿ ≈ **գիշերային թիթեռնիկ** (խսցկ.), **հացկատակ** (հնց.), **թոշակառու** ևն), «Ըստ սպասարկման ոլորտում ոչ որակյալ ֆիզիկական աշխատանք կատարելու» (հմմտ. ՀԱՐԾ ≈ **աղախին, լակեյ, ծառա, սպասավոր, աշկերտ** (հնց.) ևն), «Կենսակցություն, արտաամուսնական կապեր» (հմմտ. ՎԱՐՁԱԿ ≈ **հարճ, պոռնիկ, սիրած** (ժող.), **կենսակից** (հնց.), **հարսնակալ** ևն), «Խաբեություն, խորամանկություն, անսկզբունքայնություն, կեղծ բարեպաշտություն» (հմմտ. ՊՈՌՆԻԿ ≈ **ծախված, լակեյ, բախտախնդիր, աֆերիստ** (խսցկ.), **պնակալեզ** ևն) և այլն:

«Անձերի անվանումներ» բառախմաստային դաշտի մեկ միկրոհամակարգի...

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1642 էջ:

Աճառեան Հր. 1926, Հայերէն արմատական բառարան, հհ. 1-4, Երեւան, Հրատարակութիւն Հայաստանի Խ.Ս. Հանրապետութեան Պետական Համալսարանի, 2705 էջ:

Աճառեան Հր. 1913, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, 1178 էջ:

Ազգերեան Մ., Ճէլալեան Գ. 1865, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Ս. Ղազար, Վենետիկ, տպ. ի Սրբոյն Ղազարու, 856 էջ:

Աւետիքեան Գ., Սիւրմեյեան, Ազգերեան Մ. 1836, Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 2235 էջ:

Գաբամաճեան Ս. 1910, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ.Պոլիս, Տպագրութիւն Ռ. Սազաեան, 1414 էջ:

Գայայեան Յովհ. 1938, Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, Գալֆա, 550 էջ:

Հայրապետյան Ա. 2011, Օտար բառերի բառարան, Երևան, Հեղինակային հրատարակություն, 643 էջ:

Հր. Աճառեանի անվ. Լեզվի ինստիտուտ 1969, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 2763 էջ:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ. 2009, Միջին հայերենի բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 841 էջ:

Ղազարեան Ռ. 2006, Գրաբարի հոմանիշների բառարան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Անթիլիաս-Լիբանան, 707 էջ:

Ղարիբյան Ա. 1977, Ռուս-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան», 1472 էջ:

Ճէրէճեան Գ., Տօնիկեան Փ., Տէր Խաչատուրեան Ա. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, Պեյրուք, Կ. Տօնիկեան եւ Որդիք հրատարակչատուն, 2530 էջ:

Ճիզմեճեան Պ. 1954, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հհ. 1-2, Հալէպ, Տպարան Անի, 2224 էջ:

Մալխասեանց Ստ. 1944, Հայերէն բացատրական բառարան, հհ. Ա-Դ, Երևան, ՀՍՍՌ պետհրատ, 2409 էջ:

Ջախջախեան Մ. 1837, Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Տպարան Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1535 էջ:

Ջահուկյան Գ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ», 820 էջ:

Սարգսյան Ա. 1991, Արևմտահայերենի բառարան, Երևան, «Արևիկ», 320 էջ:

Սաքապետոյեան Ռ. 2011, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երեւան, «Տիգրան Մեծ», 382 էջ:

Սուքիասյան Ա. 1967, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 685 էջ:

ИССЛЕДОВАНИЕ ОДНОЙ МИКРОСИСТЕМЫ ЛЕКСИКО-СЕМАНТИЧЕСКОГО ПОЛЯ «НАЗВАНИЯ ЛИЦ»

МАРТИРОСЯН А.

Резюме

Ключевые слова: семантический анализ, лексический класс, лексико-семантическая группа, семантическая структура, иерархические изменения, ядерные и периферийные семы, семантическая дифференциация.

В статье впервые проводится диахронический анализ семантической структуры лексем лексико-семантической группы «Развратность, волокитство, пьянство» на материале армянского языка, сдвиги между ядром и периферийными значениями изучаемых лексем. Тестовая гипотеза позволяет утверждать, что на разных этапах развития языка изменяется не лексическая система лексических полей, а отдельные ее части и отношения между ними, поскольку любой член поля лексического класса (семантического множества, подмножества, группы) многими семантическими нитями связан с другими членами, действующими во всей системе. В результате всякое изменение последней приводит к качественному сдвигу в словарном запасе языка.

STUDY OF ONE MICROSYSTEM OF THE LEXICO-SEMANTIC FIELD “NAMES OF PERSONS”

MARTIROSYAN A.

Summary

Key words: semantic analysis, lexical class, lexico-semantic group, semantic structure, hierarchical changes, nuclear and peripheral semes, semantic differentiation.

For the first time, the article provides a diachronic analysis of the semantic structure of the lexemes of the lexico-semantic group “Depravity, philandering, drunkenness” on the material of the Armenian language, shifts between the core and peripheral meanings of the studied lexemes. The task is to identify the cognitive-semantic mechanisms of changing the meaning of words in this huge historical period, as well as their relationship with other word-formation groups. The test hypothesis leads to the statement that at different stages of language development, it is not the lexical system of lexical fields that changes, but its individual parts and the relationships between them, since any member of the field of a lexical class (semantic set, subset, group) with many semantic threads is connected with other members operating throughout the system. As a result, any change in the latter leads to a qualitative shift in the vocabulary of the language.